

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԱՐՏԱՇԵՍ I-Ի ՀԱՍՏԱՏԱԾ ՍԱՀՄԱՆԱՔԱՐԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՐ

Խրավ. գիտ. դոկտոր Ա. Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հին Հայաստանի պատմությանը նվիրված դրականության մեջ գիտնականները բազմիցս անդրադարձել են Մովսես Խորենացու այն հաղորդմանը, որի համաձայն Արտաշես I թագավորը (մ. թ. ա. 189—160 թթ.) «հրամայեց զսահմանս դիւղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց՝ եկամուտ բաղում ածելով յազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս: Եւ նշանս սահմանաց հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել շորեքկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և շորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ... Բայց ասի ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային յազգս շինութեան երկրիս»¹:

Խորենացու երկում պահպանված այս տեղեկություններն առանձին նշանակություն են ձեռք բերել Սեանա լճի մերձակայքում հայտնաբերված արամեատառ արձանագրությունների կապակցությամբ: Մի շարք գիտնականների կարծիքով այս կոթողները հաստատում են Խորենացու վերոհիշյալ հաղորդումը: Որոշ ուսումնասիրողներ գտնում են նաև, որ գյուղերի ու ագարակների սահմանադատման մասին այդ հաղորդումն իր հերթին լույս է սփռում Արտաշես I-ի կողմից իրականացված հողային քաղաքականության սոցիալական էության վրա, որը այլապես մթության մեջ կմնար, որովհետև մեզ հասած սահմանաքարերի արձանագրությունները այդ էությունը չեն բացահայտում²:

Խորենացու հաղորդած տեղեկությունները քաղված են հին զրույցներից, ուստի և հապճեպ եզրակացություններից խուսափելու համար պետք է փորձել այդ տեղեկություններից առանձնացնել այն, ինչ ստուգապես համապատասխանում է իրականությանը:

Հայագիտության մեջ ապացուցված է³, որ Խորենացին Արտաշես I-ին վերագրում է մի շարք գործողություններ, որոնք իրականում տեղի են ունեցել ավելի ուշ շրջանում: Այսպես, օրինակ, գյուղերի և ագարակների սահ-

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 184:

² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Երևան, 1971, էջ 534—536: Է. Լ. Դանիելյան, Արտաշես I-ի հողային քաղաքականության հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 129—131:

³ Տե՛ս, օրինակ, Զ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1945, էջ 125: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ XLI:

մանները որոշումը և սահմանաքարերի հիմնարկումը հորենացին բացատրում է նրանով, որ Արտաշես I-ը Հայաստանը բազմամարդացրեց, շատ աղ-գեր ուրիշ երկրներից բերելով բնակեցրեց լեռներում, հովիտներում և դաշ-տերում, մինչդեռ, ինչպես հայտնի է, դա տեղի է ունեցել Տիգրան II-ի թագավորության ժամանակ։ Հետևաբար, այդ հանգամանքը չէր կարող ար-տաշեսյան սահմանաքարերի հիմնարկման պատճառը լինել։

Բացի դրանից, հորենացու վկայությունը, թե Արտաշես թագավորը «հրամայում է գյուղերի և ագարակների սահմանները որոշել», մեր կարծի-քով, չի կարող հիմք ծառայել այն եզրակացության համար, թե Արտաշեսը «հողի բաժանում է կատարել» կամ «ագրարային ոեֆորմ է իրականացրել», որովհետև «որոշել գյուղերի և ագարակների սահմանները» արտահայտու-թյունը բոլորովին չի համընկնում «հողի բաժանում կատարել» կամ «ագրա-րային ոեֆորմ իրականացնել» արտահայտությունը։ Դրանք տարբեր հաս-կացություններ են։

Գյուղերն ու ագարակները, որոնց մասին խոսում է հորենացին, իրենց ծագման առաջին իսկ օրից հավանաբար ունեցել են քիչ թե շատ կայուն ու տրոշակի սահմաններ։ Հողի մասնավոր սեփականությունը անհրաժեշտաբար ենթադրում է որոշակի անձի միանձնյա իրավունքը տվյալ հողամասի նկատ-մամբ։ Ուստի այն ագարակը կամ կալվածքը, որը որպես սեփականություն գտնվում էր որևէ անձի իշխանության տակ (անկախ այն բանից, թե այդ կալվածքը ձեռք է բերվել ժառանգական կարգով, գնման, դավթման, թե այլ եղանակով), միշտ ունեցել է իր որոշակի սահմանները։ Նույնը պետք է ասել նաև գյուղերի մասին. եթե նույնիսկ ենթադրենք, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է գյուղական համայնքներին, այնուամենայնիվ, նրանք ունեցել են իրենց հողային տիրապետության սահմանները։ Բացի այդ, հողային ոե-ֆորմի իրականացման հետևանքով հողային սեփականության տիրապետող ձևը զոհաբերվում է հանուն մեկ ուրիշ ձևի։ Օրինակ, հին Աթենքում Սոլոնի հողային ոեֆորմի իրականացման հետևանքով խոշոր ազնվականական հո-ղատիրության փոխարեն ստեղծվեց մանր ու միջակ հողատիրություն։ Եթե Արտաշես I-ը հողային ոեֆորմ է իրականացրել, ապա օրինական հարց է ծագում. ի՞նչ բնույթ էր կրում այդ ոեֆորմը, հողային սեփականության ինչ-պիսի՞ ձև վերացվեց (կամ փոփոխման ենթարկվեց) այդ ոեֆորմի իրակա-նացման հետևանքով և ինչպիսի՞ ձև հաստատվեց։

Եվ վերջապես, Արտաշես I-ի պետության տեղիտորիայում հավանաբար գոյություն ունեին հաղարավոր գյուղեր, մասնավոր կալվածքներ ու ագա-րակներ։ Դրանց հողատարածությունները միմյանցից սահմանադատելու, նրանց միջև սահմանաքարեր կանգնեցնելու համար պետությունը ստիպված պիտի լիներ կատարել խոշոր չափերի հասնող ծախսեր, ստեղծել քաբտաշ-ների ու փորագրիչների մի ամբողջ բանակ, կաղմակերպել դրանց համար գոր-ծիքներ արտադրող բազմաթիվ արհեստանոցներ և այլն։ Նման միջոցառման իրականացումը ոչ միայն միջոցների անտեղի վատնում կլիներ, այլև գործ-նականում՝ անհնարին։

Վերևում ասվածից բոլորովին չի հետևում, թե հորենացու հաղորդած տեղեկությունները մտացածին են։ Բնավ ոչ։ Նրանց մեջ կա որոշակի ձգձար-տություն։ Սեանա լճի շրջանում հայտնաբերված կոթողները իսկապես հաս-տատում են հորենացու միտքը։ Բայց այն հարցը, թե ի՞նչ նպատակով կանգ-

նեցվեցին այդ կոթողները և ի՞նչ էին դրանք իրենցից ներկայացնում, մեր կարծիքով, դեռևս կարոտ է պարզաբանման:

Մեզ թվում է, որ այդ հարցի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ պատմական անցյալի փորձը: Սահմանաքարերի հիմնարկումը զուտ հայկական երևույթ չի եղել, հինարևելյան որոշ պետություններում այն գոյություն է ունեցել արտաշեսյան թագավորության կազմավորումից շատ առաջ: Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հին Բաբելոնի պատմությունը: Մասնավորապես, կասիտների տիրապետության ժամանակաշրջանից (մ. թ. ա. 1775—1175 թթ.) պահպանվել են այսպես կոչված կուդուռու քարերը (kudurru՝ «սահման», «սահմանաքար», մոտ 3/4 մետր բարձրությամբ): Դրանց վրա փորագրում էին կալվածատիրոջ անունը, նշում էին, թե կալվածքը ումից և ինչպես է ձեռք բերվել և այլն և կողմերի հաստատումից հետո կանգնեցնում էին կալվածքի սահմաններում: Սկզբնական շրջանում կուդուռուի մյուս օրինակը հանձնում էին տվյալ վայրի տաճարին ի պահ, մինչդեռ հետագայում կուդուռուն պահում էին տաճարում, իսկ հողամասի սահմաններում չէին կանգնեցնում: Այսպիսով, մասնավոր կալվածքների սահմանների պաշտպանությունը դրվում էր աստվածների հովանավորության տակ. նինիք աստվածը համարվում էր մասնավոր կալվածքների սահմանների և կուդուռուների «տիրակալը»:

Կասիտների թագավորները գյուղական համայնքներից ձեռք բերված հողամասերը հաճախ նվիրաբերում էին իրենց մերձավորներին, մեծատոհմիկ ու պաշտոնատար անձանց: Թագավորի հրամանագիրը փորագրվում էր կուդուռուի վրա: Անեծքների ու խիստ պատժի սպառնալիքների տակ գյուղական համայնքին և նրա անդամներին արգելվում էր խախտել հրամանագրում նշված կալվածքի սահմանները կամ հայց հարուցել այդ կալվածքի նկատմամբ: Թագավորական հրամանագրով նվիրված հողամասը դառնում էր ստացողի մասնավոր, ժառանգական սեփականությունը: Կուդուռուի երևան գալը անխղելիորեն կապված էր համայնական հողատիրության քայքայման և հողի մասնավոր սեփականության ծագման հետ: Կուդուռուն այն իրավական ակտն էր, որի միջոցով ամրապնդվում և պաշտպանվում էր հողի մասնավոր սեփականությունը: Սովորաբար կուդուռուի կանգնեցման հարցը առաջ էր գալիս այն ժամանակ, երբ գյուղական համայնքը մասնավոր կալվածատիրոջ նկատմամբ ուներ որոշակի պահանջ, կամ ընդհակառակն, մասնավոր կալվածատերը ձգտում էր համայնական հողի հաշվին ընդաֆձակել իր կալվածքի սահմանները: Կուդուռուի միջոցով լուծվում էին այդ վեճերը: Կուդուռուն երբեմն կանգնեցնում էին այն կալվածքի սահմաններում, որը ձեռք էին բերել գնման, նվիրատվության, փոխանակման, օժիտի կամ այլ կարգով: Կուդուռուի միջոցով հարթվում էին բոլոր այն վեճերը, որոնք ծագում էին ընտանիքի անդամների միջև հայրական կալվածքի բաժանման շուրջը: Ընդհանրապես այդ ակտին դիմում էին (կարող էին դիմել) բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին ապահովել իրենց կալվածքների սահմանների պաշտպանությունը հավանական հավակնորդներից:

⁴ См. С. Ф. Кечекян, Всеобщая история государства и права, ч. I, Древний мир, М., 1944, էջ 92—93; F. Steinmetzer, Die Babylonischen Xudurru als Urkundenform, Paderborn, 1922, VI, էջ 272 („Studien zur Geschichte und Kultur des Altertums“, Bd. 2, Hft. 4—5):

Մեր կարծիքով Խորենացու «Հայոց պատմության» մեջ նկարագրված արտաշեսյան սահմանաքարերը (որոնք կոչվում էին Արտաշիսական)⁵ իրենց բնույթով ու նշանակությամբ նման են հին Բաբելոնի կուղուռուներին։ Երկու դեպքում էլ խոսքը այն սահմանաքարերի, Բաբել-վավերագրերի մասին է, որոնց միջոցով պաշտպանում ու ամրապնդում էին հողի մասնավոր սեփականությունը։ Խորենացու մոտ բացակայում է մանրամասնությունները սահմանաքարերի վրա փորագրված արձանագրությունների բովանդակության մասին. նա հիշատակում է միայն այն, որ սահմանաքարերի վրա գրված է եղել Արտաշես թագավորի անունը։ Բայց որովհետև խոսքը վերաբերում է մասնատիրական կալվածքների սահմանների որոշմանը և սահմանաքարերի կանգնեցմանը, ապա թվում է թե այդ կոթողների վրա պետք է արձանագրվեին կալվածատիրոջ անունը, կալվածքի սահմանները և այլն, հակառակ դեպքում սահմանաքարը կկորցնեի իր նշանակությունը, այսինքն՝ չէր կարող լինել սեփականատիրական իրավունքի ապացույց։

Հին Հայաստանում, ինչպես և հին Բաբելոնում, մասնավոր կալվածքների սահմանների և սահմանաքարերի պաշտպանությունը դրված է եղել աստվածների հովանավորության տակ։ 1911 թ. հին Արմավիրում հայտնաբերված հունական արձանագրություններից երևում է, որ Երվանդունիների թագավորության ժամանակ մասնավոր կալվածքների սահմանների «տիրակալ» համարվում էր Արտեմիս-Անահիտ աստվածուհին։ Արձանագրության մեջ աստվածուհին պահանջում է ժառանգական գույքի բաժանումը և կալվածքների սահմանահատումը կատարել արդարացի կերպով. «Այն տունը, որ վատ ու անարդարացի կերպով է սահմանահատվում, ինքն իրեն փորում է գերեզման»⁶։ Արձանագրության վերջում աստվածուհին սպառնում է բոլոր նրանց, ովքեր կանտեսեն իր պատվիրանները։

Արմավիրի արձանագրություններից կարելի է եզրակացնել, որ Երվանդունիների օրոք գյուղական համայնական հողատիրությունը կամաց-կամաց իր տեղը զիջում էր մասնավոր հողատիրությանը։ Այդ պրոցեսը, անկասկած, նոր թափ պետք է ստանար հայկական միասնական պետության կազմավորումից հետո։ Գյուղական համայնքը, անշուշտ, շարունակում էր իր գոյությունը։ Մտրկատիրական հասարակության պայմաններում հողի մասնավոր սեփականությունն ուներ իր սահմանները, այն չէր կարող ընդգրկել երկրի ողջ հողային տարածությունը։ Սակայն մասնավոր, առանձնապես ազնվականական հողատիրության ծավալումով նրա սահմանները պետք է որ անընդհատ նվազեին։ Թագավորական իշխանությունն իր կողմից օժանդակում էր մասնավոր, հատկապես ազնվականական հողատիրության ծավալմանը, մեծամեծ կալվածքներ նվիրաբերելով իր մերձավորներին, պաշտոնական անձանց և հեթանոսական տաճարներին։ Այդ բոլորը անխուսափելի կերպով պետք է որ բախումներ առաջ բերեին կազմակերպվող հողային ազնվականության և գյուղական համայնքների միջև։ Հասկանալի է, որ թագավորական իշխանությունը չէր կարող անտարբեր լինել այդ բախումների նկատմամբ, քանի

⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Տ. Երնմյան, Նախ-ի Ռուստեմի «Քաարա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 59—70։

⁶ 2. Մանանդյան, Արմավիրի հուշարձան արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 6—7։

որ նրանք լուրջ կերպով շոշափում էին պետության շահերը, նրա գոյության նյութական հիմքերը, ֆինանսական դրությունը: Այդ պատճառով նա միջամտում և պետական-իրավական կարգավորման էր ենթարկում այդ պրոցեսները, կարգավորում այն վեճերը, որոնք ծագում էին գյուղական համայնքների և մասնավոր կալվածքների տերերի միջև: Մեր կարծիքով արտաշեսյան սահմանաքարերը հենց այն իրավական ձևերն էին, որոնց միջոցով կարգավորվում էին կալվածքների սահմանների նկատմամբ ծագող վեճերը: Հավանական պետք է համարել, որ սահմանաքարերը կանգնեցվում էին միայն այն կալվածքների սահմաններում, որոնց նկատմամբ գոյություն ուներ վեճ: Այդ կոթողները հին Բաբելոնի կուդուրուների նման ֆաբեր-վավերագրեր էին, որոնք հաստատում էին որոշակի անձի սեփականատիրական իրավունքը տվյալ ագարակի կամ հողամասի նկատմամբ: Նրանց երևան գալը կապված էր համայնական հողատիրության քայքայման և հողի մասնավոր սեփականության ծագման հետ: Սահմանաքարերի միջոցով կարգավորում էին բոլոր այն վեճերը, որոնք ծագում էին կալվածքների սահմանների շուրջը, ապահովելով հողի մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը:

Որպես վավերագրեր, սահմանաքարերը կարող էին տարբեր բովանդակություն և տարբեր ձևեր ունենալ: Այն սահմանաքարերը, որոնց վրա փորագրվում էին թագավորական հրամանագրեր կամ որոնք կանգնեցվում էին արքունիքին պատկանող կալվածքների սահմաններում, իրենց բովանդակությամբ ու ձևով պետք է որ տարբերվեին այն սահմանաքարերից, որոնք կողմերի համաձայնությամբ կանգնեցվում էին մասնավոր կալվածքների սահմաններում: Օրինակ, խորենացու նկարագրած սահմանաքարերը իրենց ձևով (քառակուսի քարեր, մեջերը պնակի նման փոս, վրան քառակուսի կոթող) որոշ չափով տարբերվում են Սևանա լճի շրջանում հայտնաբերված սահմանաքարերից, որոնց վերևի մասը ատամնաձև է:

Այժմ դառնանք Սևանա լճի շրջանում հայտնաբերված արամեատառ կոթողների վրա եղած արձանագրություններին⁷: Սովետական ականավոր սեյագետ Ա. Յա. Բորիսովը պարզել է, որ Սևանի Ա և Բ արձանագրությունների առաջին տողերում գրված են հայոց Արտաշես թագավորի և նրա հոր՝ Զարեհի անունները⁸: Ա արձանագրության 4-րդ տողը, ըստ Ա. Յա. Բորիսովի, արամեական լեզվով անընթեռնելի է: Հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ RWNDKNHLT կամ DWNKKNHLT սեմական տառանիշների տակ կարող են թաքնված լինել հին հայերեն բառեր:

Ֆրանսիացի սեմագետ Ա. Դյուպոն-Սոմերը նույնպես գտնում է, որ Ա և Բ արձանագրությունների առաջին տողերում փորագրված են Արտաշես թագավորի և նրա հոր՝ Զարեհի անունները⁹: Ահա նրա կողմից առաջարկված ընթերցումն ու թարգմանությունը¹⁰:

⁷ Սևանա լճի շրջանում հայտնաբերված սահմանաքարերի արձանագրությունների մասին տե՛ս К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1952; А. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении («Вестник древней истории», 1946, № 2); Գ. Տիրացյան, Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 10:

⁸ Տե՛ս А. Я. Борисов, նշվ. աշխ., էջ 97—104:

⁹ Տե՛ս А. Dupont-Sommer, Deux inscriptions araméennes trouvées près du lac Sevan (Arménie). Extrait de la Revue Syria, XXV, 1946—1948, fasc. 1—2, էջ 53—66:

¹⁰ Ա. Դյուպոն-Սոմերի նշված հողվածում բերվում է արձանագրությունների հրեական

Ա		Բ	
‘RTHŠSY	1 Արտաշես	[‘R]THŠSY	1 [Ար]տաշես
[ML]K BR ZY	2 Թագավոր, որդի	[ML]K BR ZY	2 Թագավ[որ], որդի
[ZR]YTR	3 Զարեհ	[ZR]YTR HI.[S]	3 [Զար]եհի, ձգում է
NWN* KN HLS	4 ձուկ է այստեղ ձգում:	[K]N BYN[Y]	4 այստեղ ծածալն
		[T]Y	5 ներ]:

Սովետական որոշ գիտնականներ Դյուպոն-Սոմերի այս ընթերցումը համարում են սխալ և գտնում են, որ սեմական լեզվաբանության տեսակետից այն քննադատության չի դիմանում: Այդպիսին է Ի. Մ. Դյակոնովի և Կ. Բ. Ստարկովայի տեսակետը¹¹: Վերջիններս նախ առարկում են h^alas (HLS արմատից) բայի ընթերցման դեմ: Այդ բայը, գրում են նրանք, կարելի է, իհարկե, թարգմանել «ձգել», «քաշել» բառերով, բայց այդ բառը հաղիվ թե կարող է կիրառվել «ձկան որսի հետ կապված կոնտեքստում»: Միաժամանակ նրանք նշում են, որ հյուսիսային սեմական լեզուներում ձկնորսությունը նկարագրելու ժամանակ կիրառում են «ձգել», «քաշել», «հանել», «որսալ», «ձկնորսություն անել» բառերը, և որ արամեերեն լեզվում HLS բառը հիմնականում նշանակում է «քաշել, հանել, մերկացնել»¹² և այլն:

Ինչ վերաբերում է Ա արձանագրության 4-րդ տողի NWN* («ձուկ») և KN («այստեղ») բառերի ընթերցմանը, ապա հարկ է նկատել, որ Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան դրանց նկատմամբ ոչ մի դիտողություն չեն արել: Ավելին, նրանք գտնում են, որ K^aN բառարմատը հսկապես նշանակում է «այստեղ»¹³:

Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան առարկում են նաև Բ արձանագրության BYNYTY (ծածաններ) բառի ընթերցման դեմ¹⁴: Նրանք սխալ են համարում Ա. Դյուպոն-Սոմերի կարծիքն այն մասին, որ արձանագրությունների մեջ T և S տառերը համընկնում են իրար¹⁵:

Ա. Դյուպոն-Սոմերի ընթերցումը համարելով անընդունելի և նկատի ունենալով այն, որ հայտնաբերվել են նոր կոթողներ, Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան ձեռնարկել են այդ արձանագրությունների ընթերցման ու մեկնաբանման նոր փորձ: Նրանք գտնում են, որ Սևանի Ա արձանագրության

տառադարձությունը շեղելով Ի. Մ. Դյակոնովին և Կ. Բ. Ստարկովային, մենք նպատակահարմար գտանք բերել արձանագրությունների լատինական տառադարձությունը:

¹¹ И. М. Дьяконов и К. Б. Старкова, Надписи Артаксися (Арташеса), царя Армении («Вестник древней истории», 1955, № 2, էջ 163):

¹² նույն տեղում:

¹³ նույն տեղում, էջ 168:

¹⁴ Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան ճիշտ են նկատում, որ Սևանա լճում կարպեր (ծածաններ) չեն լինում: Բայց, ինչպես գրում է Ա. Դյուպոն-Սոմերը, անցյալում «ծածան» բառը կիրառել են իշխան ձկան նկատմամբ, որը անվանում էին «poissons royaux» կամ «poissons princiers»: Վկայակոչելով Շարդենին, որ XVII դարի 60-ական թթ. եղել է Հայաստանում, Ա. Դյուպոնը գրում է, որ ճանապարհորդի կարծիքով ծածանը (carpe) վերին աստիճանի հաճելի ձուկ է և հայտնի է ամբողջ Արևելքում (տե՛ս նշվ. աղյւ., էջ 63): Անշուշտ, այստեղ խոսքը իշխանի մասին է:

¹⁵ И. М. Дьяконов и К. Б. Старкова, նշվ. աղյւ., էջ 164:

4-րդ տողի վերջին տառը պետք է լինի Q (քոֆ) և ոչ թե T կամ S¹⁶։ Դրան համապատասխան էլ այդ տողի վերջին բառարմատը պետք է լինի HLQ (həleq) (բաժին, մաս, հողամաս, դաշտ)։

Արամեերեն գրերը, ինչպես երևում է Ի. Մ. Դյակոնովի և Կ. Բ. Ստարկովայի¹⁷, Ա. Գ. Փերիխանյանի¹⁸ և Ա. Դյուպոն-Սոմերի¹⁹ հոդվածներում բերված աղյուսակներից, իհարկե, ունեցել են շատ տարբերակներ, հետևաբար, կարելի է ենթադրել, որ Սևանի Ա արձանագրության 4-րդ տողի վերջին տառը Q (քոֆ) է և ոչ թե T կամ S։ Բայց հարց է ծագում, այդ բառարմատը լեզվական ու տրամաբանական տեսակետից համաձայնեցվո՞ւմ է նշված տողի մյուս բառարմատների հետ։ Ուրիշ կերպ ասած, արդյոք այդ փոփոխությունը օգնո՞ւմ է արձանագրության բովանդակությունը և նշանակությունը բացահայտելուն։

Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան առաջարկում են Սևանի Ա և Բ արձանագրությունների հետևյալ ընթերցումները։

Ա

- | | | | |
|---------------|---------------|-----------|--|
| 1. 'RTHŠSY | 2. MLK BR ZY | 3. ZRYTR | 4. RWNDKN HLQ: |
| ա) 1. Արտաշես | 2. արքա, որդի | 3. Զարեհի | 4. RWNDKN [հողամասը] բաժանեց (սահմանադատեց)։ |

բ) 1. Արտաշես 2. արքա, որդի 3. Զարեհի 4. RWNDKN հողամաս (կամ RWND-ական)։

Բ

- | | | |
|-----------------|---------------------|-----------------------|
| 1. ['R]THSŠY | 2. [ML]K BRZY | 3. [ZR]YTR HL[Q] |
| ա) 1. [Ար]տաշես | 2. [ար]քա, որդի | 3. [Զեր]եհի [բաժան]եց |
| | 4. [KL]N BYN[...] | 5. [...]Y[...] |
| | 4. / ... միջև [...] | 5. ... |

բ) 1. Ա[ր]տաշես 2. [ար]քա, որդի 3. [Զար]եհի [հողա]մաս 4. [...] միջև [...] 5.

Ուշագիտելի ընթերցողը չի կարող չնկատել, որ այս ընթերցումները ավարտված ու ամբողջական չեն և ըստ էության չեն բացահայտում արձանագրությունների իմաստն ու նշանակությունը։ Ա արձանագրությունը, որը ամբողջապես պահպանվել է, Ի. Մ. Դյակոնովի և Կ. Բ. Ստարկովայի ընթերցմամբ ունի երկու տարբերակ՝

ա) Զարեհի որդի Արտաշես արքան RWNDKN [հողամաս] բաժանեց։

բ) Զարեհի որդի Արտաշես արքան։ RWNDKN (կամ RWND-ական) հողամաս։

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 165։

¹⁷ Նույն տեղում, էջ 167։

¹⁸ Տե՛ս А. Г. Периханян, Арамейская надпись из Гарни, «Математико-физико-математический журнал», 1964, № 3, էջ 129։

¹⁹ Տե՛ս А. Dupont-Sommer, նշվ. աշխ., էջ 60։

Ինչպես տեսնում ենք, Լրկու տարբերակներում էլ արձանագրության ընթերցումը թերի է, իսկ միտքը պարզ չէ: HLQ (həleq) բառը, որի վրա հեղինակները կենտրոնացրել են իրենց ուշադրությունը, մի դեպքում ընթերցվում ու թարգմանվում է «բաժանել», իսկ մյուս դեպքում՝ «հողամաս»: Դրանով իսկ լուրջ կասկածի տակ է դրվել ինչպես «բաժանել», այնպես էլ «հողամաս» բառերի առկայությունը արձանագրության մեջ: Մեր կարծիքով, դա հասկանալի է, քանի որ տվյալ դեպքում խոսքը սահմանաքարերի մասին է, այնպիսի կոթողների, որոնք կանգնեցվում էին առանձին, մասնավոր կալվածքների, ագարակների սահմաններում և հաստատում էին կալվածատիրոջ սեփականատիրական իրավունքը տվյալ հողի նկատմամբ: Այստեղ հողի բաժանման մասին խոսք լինել չէր կարող: Շատ հավանական է, որ արձանագրությունների ընթերցման ժամանակ Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան նկատի են ունեցել խորենացու վերը բերված հաղորդումը: Բայց այդ հաղորդման մեջ, ինչպես տեսանք, խոսքը ագարակների և գյուղերի սահմանների ուղղման, այսինքն նշգրտման, կարգավորման և ոչ թե հողամասի բաժանման մասին է:

Մեզ թվում է, որ Սևանի Ա արձանագրության 4-րդ տողի իմաստն ու բովանդակությունը հասկանալու համար անհրաժեշտ է վերծանել ու մեկնաբանել այն բառերը, որոնք թաքնված են RWNDKNHLT տառանիշների տակ: Եթե դատելու լինենք այդ տառանիշների արտաքին տպավորությունից, դրանց մեջ, իհարկե, կարելի է տեսնել հայերեն «երվանդական» բառը: Մեր կարծիքով դա զուտ արտաքին, խաբուսիկ տպավորություն է: RWNDKNHLT տառանիշների այդպիսի ընթերցումը չի բացահայտում Սևանի արձանագրությունների իմաստն ու նշանակությունը: Բացի դրանից, դեռևս Ա. Յա. Բորիսովը ժամանակին նկատել էր, որ Ա արձանագրության 4-րդ տողի առաջին տառը կարող է լինել ոչ թե R, այլ D, իսկ Ա. Դյուպոն-Սոմերը ցույց է տվել, որ Ա արձանագրության 4-րդ տողի առաջին տառը պետք է ընթերցել N և ոչ թե R կամ D: Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան Դյուպոն-Սոմերի այդ դիտողությունը համարում են հիմնավորված²⁰: Եթե այդպես է, ապա «երվանդական» բառի առկայությունը Սևանի արձանագրություններում բացառվում է²¹:

Կարծում ենք, որ Սևանի արձանագրությունների ընթերցման ժամանակ ոչ մի դեպքում չպետք է մոռանալ, որ այստեղ մենք գործ ունենք սահմանափակների, ֆաբեր-վավերագրերի հետ: Այդ կոթողների միջոցով Սևանա լճի արևմտյան ափին սահմանահատվել է որոշակի տարածություն: Անհրաժեշտ է պարզել, թե ո՞վ է եղել այդ տարածության տերը և տնտեսական ի՞նչ նշանակություն կարող էր ունենալ այդ տարածությունը՝ վարելահող էր այն, այդի՞ էր, անտա՞ն, թե մի այլ բան:

²⁰ Տե՛ս Н. М. Дьяконов и К. Б. Старкова, նշվ. աշխ., էջ 165—166:

²¹ Գ. Տիրացյանը իր վերը նշված հոդվածում (էջ 108—109, տե՛ս նաև БДН, 1959, № 1, էջ 89—90) փորձում է հիմնավորել «բավանդական» (այսինքն երվանդական) բառի առկայությունը քննարկվող արձանագրությունների մեջ: Այդ բառը, նրա կարծիքով, վերաբերում է ոչ թե հողամասին, ինչպես ենթադրում են Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան, այլ արտաշեսյաններին, այսինքն Արտաշես թագավորը կրել է երվանդական տիտղոսը: Մեր կարծիքով Սևանի և Զանգեզուրի արամեաառ արձանագրությունների մեջ եղած RWNDKN տառանիշների խումբը դեռևս վերծանված ու մեկնաբանված չէ:

Բոլոր այն դիտնականները, ովքեր ղբաղվել են Սևանի արձանագրությանն ենթերցումով, գտնում են, որ դրանց առաջին տողերում փորագրված են Արտաշես թագավորի և նրա հոր՝ Զարեհի անունները, և որ այդ կոթողների միջոցով Սևանա լճի արևմտյան ափին սահմանահատված տարածությունը եղել է Արտաշես թագավորի արհմի սեփականությունը: Մնում է պարզել այն հարցը, թե տնտեսական ինչ նշանակություն ունեն հայկական արքունիքին պատկանող այդ տարածությունը: Մեր կարծիքով այդ հարցի պատասխանը թաքնված է Սևանի Ա արձանագրության 4-րդ և Բ արձանագրության վերջին տողերում: Նորից վերադառնանք Ա. Դյուպոն-Սոմերի ընթերցմանը:

Ինչպես վերը տեսանք Ա արձանագրության 4-րդ տողում Ա. Դյուպոն-Սոմերը կարդում է երեք բառարմատ՝ *NWN* (ձուկ), *KN* (այստեղ) և *HLŠ* (ձգել, քաշել, հանել): Նրա ընթերցմամբ այդ արձանագրությունը կարդացվում և թարգմանվում է այսպես. «Արտաշես թագավորը, Զարեհի որդին, ձուկ է այստեղ ձգում» (որսում):

Ա. Դյուպոն-Սոմերի այդ թարգմանությունը, իհարկե, տառացի է, բայց դրա միտքը բավական պարզ է, բոլոր բառերը ներքնապես կապված են և արտահայտում են բոլորովին որոշակի, պարզ ու ամբողջական մի միտք: Եթե արձանագրության այդ տառացի ընթերցումն ու թարգմանությունը արտահայտենք ժամանակակից հայերենով, ապա կստացվի հետևյալը. «Այստեղ Զարեհի որդի Արտաշես թագավորի ձկնորսարանն է»: Ահա մեր կարծիքով, Սևանի արձանագրությունների իմաստն ու սոցիալ-տնտեսական նշանակությունը: Պետք է ենթադրել, որ այն կոթողները, որոնք հայտնաբերվել են Սևանա լճի արևմտյան ափին, եղել են արտաշեսյան արքունիքի ձկնորսարանի տերիտորիայի սահմանաքարերը: Դրանով հաստատվում է խորենացու այն միտքը, թե Արտաշես թագավորի ժամանակ Հայաստանի լճերի ու գետերի վրա եղել է կաղմակերպված ձկնորսություն: Թեպետ, դրում է խորենացին, Արտաշեսին նախորդող թագավորները գեղեցիկ կարգեր ու սովորություններ հաստատեցին, «այլ ի մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին... և ոչ ի ծովակս աշխարհիք նաւագնացութիւնք, և ոչ գործիք ձկնաց որսանց... Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշեսի»²²:

Այդ տեսակետից արժանի է հիշատակման Փափստոսի հաղորդումը Վանա լճի արքունական ձկնորսարանի մասին: «Եւ դիպեցան միմեանց (հայկական և պարսկական զորքերը—Ա. Դ.) առ ափն ծովուն Բղնունեանց, յԱռեստնաւանի, ձկնատեսանսն արքունի ի վերայ գետակին»²³: Ձկնորսարանը, ինչպես գրում է Փափստոսը, պատկանում էր Արշակունի թագավորներին, որոնք հպատակներից որոշ տուրք էին ստանում Առեստ գետակում ձուկ որսալու համար²⁴: Շատ հավանական է, որ Սևանա լճի ձկնորսարանը օգտագործվել է այնպես, ինչպես Առեստ գետակի վրա գտնվող ձկնորսարանը, այսինքն հայոց թագավորները որոշ տուրք էին ստանում հպատակներից Սևանում ձուկ որսալու համար:

²² Խորենացի, էջ 186:

²³ «Փափստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 17:

²⁴ Փափստոսը նկատի ունի Առեստ ավանի մոտով հոսող Առեստ գետակը Վանա լճի հյուսիսում, որտեղ որսում և աղելով վաճառքի էին հանում Վանի հայտնի տառեխը:

Արտաշես I-ի ձկնորսարանի մասին մեր եզրակացությունը մենք չենք համարում վերջնական: Կարծում ենք, որ այս հարցը դեռևս ենթակա է հետազոտումների, որ Սևանի արձանագրությունների վերջին տողերի ընթերցումը դեռևս կարոտ է ճշգրտման: Առայժմ մեզ համար անվիճելի է, որ ինչպես Սևանի շրջանում, այնպես էլ Հայաստանի այլ վայրերում հայտնաբերված արամեատառ արձանագրությունները արված են սահմանաքարերի վրա, որոնց միջոցով կարգավորվում էին կալվածքների սահմանների շուրջը ծագող վեճերը և դրանով իսկ ամրապնդում հողի մասնավոր սեփականությունը: Բուն արձանագրությունները, ինչպես կարելի է ենթադրել, պիտի ունենային տարբեր բովանդակություն:

ПРАВОВОЕ ЗНАЧЕНИЕ МЕЖЕВЫХ КАМНЕЙ АРТАШЕСА I

Доктор юрид. наук **А. М. ДАНИЕЛЯН**

(Резюме)

В статье рассматривается сообщение Мовсеса Хоренаци о межевых камнях царя Армении Арташеса I (189—160 гг. до н. э.), найденных в районе оз. Севан и в некоторых других районах Армении. Предполагается, во-первых, что эти камни устанавливались на границах частных земельных владений (или хозяйств) и свидетельствовали о праве собственности данного лица на данное земельное владение. Во-вторых, межевые камни устанавливались лишь на границах тех владений, которые оспаривались или могли оспариваться в будущем, служа правовой формой регулирования споров о границах частных земельных владений. В-третьих, появление межевых камней тесно связано с разложением общинного землевладения и установлением частной собственности на землю. Что касается надписей на межевых камнях, найденных в районе оз. Севан, то в них, видимо, содержится указание на рыболовные промыслы царя Арташеса.